



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1 MAR 2010

368.5

Հ-11

ԵՐՋԱԲԵՐՈՒԿԱՆ № 59

Հաստ պետ. ապահովագրութեան

ԲՈԼՈՐ ՇՐՋՖԻՆԲԱԺԻՆՆԵՐԻՆ

1932 թ. ընթացիկ տարում չբջինբաժինները և գյուղխորհուրդները կարկտահարության և անբերրիության վնասները վորոշելիս պետք է զեկավարվեն՝

1. Կոպարային ապահովագրության կանոններով, վորը հաստատված և ԽՍՀՄ-ի ֆինժողկոմատի կողմից 15 հունիսի 1931 թ. և

2. Սույնին կցված՝

ա) գյուղատնտեսական մշակույթներին կարկտահարությունից հասած վնասները գնահատելու և լուծարքելու հրահանգով և

բ) տեխնիկական հատուկ հրահանգով։

Ֆինժողկոմ՝ ՀԱՆԵՍՈՂԱՅԱՆ

Ապ. սեկտորի զեկավար՝ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հաստատված եմ
Ֆինժողկոմ Գ. Հասանողլան
10 ապրիլի 1932 թ.

ՀՐԱՅԱՆԳ

Դյաւլատնտեսական մշակույթներին կարկտահարությունից և անբերրիությունից հասած վնասները լուծարելու մասին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

§ 1.

Վորպես ընդհանուր կանոն, գյուղատնտեսական մշակույթներին կարկտահարությունից և անբերրիությունից հասած վնասների գնածառումը պետք է կատարի չբջանային ֆինբաժնի ներկայացուցիչը (ապահովուչը) և չբջանային գյուղատնտեսը։

Հուծարքման աշխատանքները (վնասի վորոշում) մանում են զյուղատնեսի և ապուեսչի անմիջական պարտականությունների մեջ։ Նրանց վրա դրվում է նույնակես հրահանդչական աշխատանքները վնասաների լուծարքման նկատմամբ, վորոնք պարտավոր են ժամանակին հրահանգելու բոլոր դյուլիսորհուրդներին և կոլխոզների վարչություններին։

§ 2.

Վնասների լուծարքումը (դնահատումը) կատարվում է ծրագրված ձևով։ Ֆինբաժնը ծրագրում ցույց է տալիս, թե վորտեղ և վոր ժամանակում պետք է լուծարեք վնասներն այն հաշվով, վորպեսզի կանաներով նախատեսված ժամկետներին լուծարվին բոլոր վնասված բուսական մշակույթները։

§ 3.

Մինչև կարկտահարության սեղոնի սկիզբը Փինբաժնը պարտավոր բացատրական աշխատանքներ տանել չըջանի գյուղերում, հրահանգել գյուղխորհուրդներին և կոլտնտեսությունների վարչություններին՝ նրանց անելիքների մասին և մատակարարել նրանց բլանկներով տուժողների ցուցակները կազմելու համար։

ԱՊԱՀՈՎՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 4.

Պարտադիր ապահովագրումը Հայաստանում 1932 թ.¹ տարածվում է բոլոր տեսակի գյուղատնտեսական բուսական մշակույթների վրա (տես ՀՍԽՀ Ժողկոմիորհի 1931 թ. հունիսի 30-ի վորոշումը)։

§ 5.

Հստ պարտադիր կոպարային ապահովագրության բուսական մշակույթների վնասները վճարվում են կարկտահարությունից հեղեղից, փոթորկից և անբերը լությունից (տես Ժողկոմիորհի վորոշումը)։

Յուրաքանչյուր գյուղատնտեսական մշակույթի համար պատասխանատվության շափը սուհմանված է ՀՍԽՀ Ժողկոմիորհի 1931 թվի հունիսի 30-ի վորոշումով։

Տանըքություն. — Կարկտահարությունից և հեղեղից ապահովագրելիս չեն վճարվում վնասները։

ա) վնասատուների կամ հիվանդությունների պատճառած բույսերի վզնչացումից, նույնիսկ, յեթե նրանք առաջացած լինեն խօնավության առատությունից։

բ) արմատների վրա ծլելուց և բույսերի պարկումից։

368.5
3-11
W.

§ 6.

Բուսական մշակույթների կոպարային ապահովագրության պատասխանատվությունը բոլոր մշակույթների համար՝ ծլելու որից, իսկ տունկային մշակույթների համար՝ տնկելու վայրկյանից։ Այդեզործական տնկարանների գծով՝ բողբոջներ գոյացալու որից։

§ 7.

Կոպարային ապահովագրության պատասխանատվությունը վերջանում է, յերբ գույքը (բուսական մշակույթը) անցնում է այնպիսի տիրապետողի, վորի գույքերը յենթակա չեն կոպարային ապահովագրության։

Բացի դրանից, բերքը լրիվ հավաքելու որից, բայց վոչ ուշ նոյեմբերի մեկից։

§ 8.

Ապահովագրվողը, կամ նրան վորխարինող անձնավորությունը պարտավոր է անհապաղ, համենայն դեպք վոչ ուշ, քան յերկու որվա ժամկետում, տեղեկացնել չըջգործկոմին կամ դյուլիմորհորդին (կամ դյուլիմորհորդի լիազորին) իր բաւսական մշակույթի մեջ տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին։

§ 9.

Ապահովագրական պատահարն առաջանալիս ապահովագրվողը պարտավոր է մինչև արձանագրության կազմելն անասուններ չարածացնել վնասված հողամասում և չկատարել վորմեկ գործողություն, վորը կարող է նվազացնել ապահովագրական պատահարից հետո մնացած բերքի արժեքը։

Բացի դրանից, ապահովագրվողը պարտավոր է չարունակելու իր միջոցներով մշակել մնացած վնասված մշակույթները, յեթե նրանք ինամբ են պահանջում (քաղցան, ջրել, պաշտպանություն վնասատուներից և այլն)։

§ 10.

Արձանագրությունը կարկտահարության կամ անբերը իրության մասին պետք է կազմվի չըջգործկոմի (չըջգործկոմի) կամ դյուլիմորհորդի կողմից վոչ ուշ, քան յերեք որվա ժամկետում ծանուցումն ստանալու որից, յեթե ապահովագրվողի կողմից հայտնված է վերացանքի ան-

09 SEP 2013

Հրաժեշտության մասին։ Այլ դեպքերում չըջործկոմի (չըջինբարժենի) կամ գյուղտորհնդի նշանակած ժամկետներում, սակայն մինչև մասնակի կամ լրիվ բերքահավաքի սկիզբը։

§ 11.

Արձանագրությունն ապահովագրական պատահարների մասին կազմվում ե վնասված բուսական մշակույթի զննության հիման վրա (տես ներքեւ)։ Ապահովագրվողը սրբության հայտնի իր ունեցած բոլոր տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են կրած վնասի չափը վորոշելու համար։

§ 12.

Վնասի չափը վորոշելիս ստուգվում է՝ ճի՞շտ ե կիրառել արդյուք կողարային չափը։

§ 13.

ա) Յեթե կարկտահարությունից և այլ տարերային աղետներից վնասված ցանքերը և տնկարանները վերացանքել են, այդ վերացանքի ժամանակը հատուցվում են վոչնչացած սերմանյութի արժեքի և վարեւահողի լրացուցել մշակման արժեքի չափով, սակայն ապահովագրական գումարի (չափի 50 տոկոսից վոչ ավելի), իսկ բամբակի նորմացի 20 տոկոսից վոչ ավելի (հիմք Անդրֆինժողկոմատի № 081974)։

Յեթե ապահովագրական պատահարը տեղի յե ունեցել այնտիւ ժամանակ, յերբ վերացանքը հնարավոր ե անհրաժեշտ եր, բայց ապահովագրվողն այդ չի արել, այդ դեպքում վնասի համար վարձատրություն տրվում ե այն գումարի կեսի չափով, վորը նրան հասնելու յեր, յեթե նա կատարեր վերացանքը։

բ) Յեթե ապահովարական պատահարը տեղի յե ունեցել այնտիւ ժամանակ, յերբ վնասված մշակույթը չեր կարելի վերականգնել, վնասի չափը վորոշվում է՝

1. Կարկտահարությունից ապահովագրության գծով թե յենթագրելիք բերքի վոր մասն ե վոչնչացել ապահովագրական պատահարից ամբողջ վնասված տարածության վրա։

Հետո վորոշվում ե վնասված տարածության ապահովագրական դրամարը, այսինքն՝ կողարային չափը բազմապատկիցում ե վնասված հեկտարների քանակի վրա։

Ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում ե ապահովագրական գումարի այն մասի չափով, վորը համապատասխանում ե վոչնչացած բերքի մասին։

Որինակ՝ պարզել ե, վոր ապահովագրական պատահարից վոչնչա-

ցել ե յենթագրելիք բերքի մեկ յերրորդը, ապահովագրական վարձատրությունն այդ դեպքում հաշվարկվում ե ապահովագրական գումարի մեկ յերրորդի չափով։

Մանրությունն ։ Յեթե բերքի արժեքն ապահովագրական գումարից ավելի քիչ ե դուրս դալիս, այդ դեպքում հաշվի յե առնվում նրա իրական արժեքը (կայուն գներով)։ Որինակ՝ Ռշական գյուղի խաղողի այգիների ապահովագրական նորման մասնավոր սեկտորի համար սահմանված է 400 ռ. մեկ հեկտարից։ Լուծարքի ժամանակ պարզվում է, վոր տվյալ գյուղացի Գառապարյան Մանուկի մեկ հեկտար խաղողի այգին, յեթե կարկտահարություն անդամ չլիներ, միմիայն 300 ռ. բերք կտար (հաշված պետական գներով)։ Յենթագրենք, վոր տվյալ այգին կարկտահարված է 50 տոկոսով։

Ապահովագրության վարձատրության չափը կլինի 150 ռուբլի, այլ դոչ թե 200 ռուբլի։

2. Անթերրիտությունից ապահովագրական գծով—վորոշվում ե բերքի թերահավաքը։ Թերահավաքը համարվում է իրական բերքի և տվյալ վայրի համար կուպարային ապահովագրուման գծով հաստատված բերքաչափերի տարբերությունը։

Ապահովագրական վարձատրությունը վորոշվում ե բերքի բերքահավաքի արժեքի գումարով—հաշված Մատոնդկոմատի մթերման կայուն գներով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂԻ ԶՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ (տես կանոններ § 28)

§ 14.

Ապահովագրվողն անպայման զրկվում է ապահովագրական վարձատրությունն ստանալու իրավունքից հետեւյալ գեղքերում։

1. Կոլտնտեսությունները և մասնավոր տիրապետողները։

Յեթե պահանջը՝ ապահովագրական վարձատրության մասին ներկայացվում ե որենքով սահմանված վաղեմիությունն անցնելուց հետո (յերկու տարուց հետո)։

2. Մասնավոր տիրապետողները։

Յեթե ապահովագրվողը, հնարավորություն ունենալով հանդերձ, չի հայտնել աեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին յերեք ամսվա ընթացքում։

Ապահովագրվող կարող է զրկվել ապահովագրական վարձատրությունից հետեւյալ դեպքերում (§ 29 կանոնների)։

§ 15.

1. Կոլտնտեսությունները և մասնավոր տիրապետողները.

Տեխնիկական մշակույթների անբերրիությունից ապահովագրական գծով, յեթե լրիվ կամ մասնակի թերահալաքն առաջացել ե նրանից, վոր ապահովագրվողը, հնարավորություն ունենալով հանդերձ, չի կատարել տվյալ վայրում սահմանված աղբոմինիմումը:

2. Մասնավոր տիրապետողները՝

ա) Յեթե ապահովագրվողը համատարած հաշվառման ժամանակ միտումնորեն սխալ տեղեկություններ կտա ապահովագրման յենթակառյեկտների մասին:

բ) Յեթե ապահովագրվողը, հնարավորություն ունենալով հանդերձ, չի հայնի § 8-ում հիշված ժամկետում տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին:

Ծանոթություն 1.— Սույնի § 15-րդում հիշված կանոնների

(§ 29) դեպքերում ապահովագրվողները կարող են դրկվել ապահովագրական վարձատրությունից, բայց վոչ անպայման: Այդ կնշանակի, վոր յենելով կոնկրետ դեպքերից, ըրջործկոմներին իրավունք է վերապահվում ինչպես բացառություն և չըրկել ապահովագրվողին ապահովագրական վարձատրությունից, բայց այդպիսի վճարումները պետք է հիմք ունենան հիմնավորված պատճառներ:

Ծանոթություն 2.— Յեթե ապահովագրվողը համատարած հաշվառման ժամանակ միտումնորեն սխալ տեղեկություններ և տվյալ ապահովագրման յենթական որյեկանների մասին (որինակ փոխարեն 4 հեկտար ցանք ցույց տալու, նա ցույց է տվել յերեք հեկտար), այդ դեպքում ըրջործկոմը կարող է, յենելով կոնկրետ դեպքից, մասնակի կամ ամբողջովին մերժել վիճակը կամ բախարարել լրիվ (հիմք միութենական ֆինտողկոմատի 1931 թ. Հոկտեմբերի 1-ի գորությունը):

Ապահովագրական վարձատրությունը բոլորովին չի տրվում (§ 31 կանոնների):

§ 16.

Կոլտնտեսություններին և մասնավոր տիրապետողներին՝

Յեթե նրա գումարը 3 ուորլուց պակաս ե, իսկ տեխնիկական մշակույթների ապահովագրական գծով—յեթի գումարը 5 ուորլուց պակաս ե:

§ 17.

Ապահովագրական վարձատրությունը վճարելուց հետո ապահովա-

գրությունը մնում է իր ուժի մեջ, բայց կոպարային չափը (նորման) նվազեցվում է ապահովագրվողին արված գումարով:

Որինակ՝ կոլխոզն ունի չորս հեկտար բամբակի ցանք, վորը գարնան կարկտահարության հետեւնքով փչացել է 100 տոկոսով: Այդ բամբակի ցանքը կոլխոզը նորից վերացանում է և վերացանման համար ծախումը է 120 ռ. (վոչ ավելի ապահովագրումարի 20 տոկոսից), վորպիսի գումարը վճարվում է կոլխոզին ինչպես ապահովագրական վարձատրություն (տես սույնի § 13):

Ողոստոս ամսում նույն բամբակի ցանքը կարկտահարվում է, վորի հետևանքով կոլխոզն այդ չորս հեկտարից պակաս է հավաքում նորմայի չափից ություններ: Այդ ությունների ապահովագրական վարձատրության չափը հավասար կլինի (8×28 ռ. 57 կ.) 228—56 կոպ., բայց վորովհետև վերացանման համար արդեն վճարված է կոլխոզին 120 ռ., ուրեմն 228—56 կոպ. պետք է դուրս դալ 120 ռ. և կոլխոզին վճարել 128 ռ. 56 կոպ.:

§ 18.

Ապահովագրական վարձատրության գումարի վրա (վնասի գումարի վրա), վորը հասնում է ապահովագրվողին, ըստ պարտադիրի կոպարային ապահովագրության չի կարելի կատարել վորնել գանձում ապահովագրվողի պարտքերի դիմաց, սկստմարմիններին և մասնավոր անձանց, բացառությամբ ապահովագրվողի վրա հաշվող կոպարային ապահովագրության վճարումների և հետույթի, աշխատավարձի և սոցիալական ապահովագրության պարտքերի գումարներից:

§ 19.

Բուսական մշակույթների ապահովագրական վարձատրությունը վճարելի կուլտակային տնտեսությունների նկատմամբ պետք է զեկավարվել «հատուկ կանոններով կուլակային տնտեսությունների համար» (տես «Կոպարային ապահովագրության կանոնները»):

Գյուղականուրիուրդների պարտականությունները կարկտահարության և անբերի հեպին:

§ 20.

Գյուղականուրդները կարկտահարության և անբերիության վնասների վարուման ընթացքում պարտավոր են կատարել հետեւյալ աշխատանքները՝

1. Իրաղեկ գարձնել բոլոր ապահովագրվողներին այն մասին, վոր կարկտահարության ամեն մեկ առանձին դեպքում նրանք անմիջապես ի վոչ ուշ, քան յերկու որից հայտնեն գյուղորհրդին, նախազգուշաց-

նելով, վոր հակառակ դեպքում Ֆինժողկոմատն ապագայում վոչ մէ Հայտարարություն չի ընդունի և տեղի ունեցած վնասի համար պատասխանատու չե (կանոնների § 16):

2. Գյուղխորհուրդները վոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում ամեն մեկ տեղի ունեցած կարկտահարության մասին գրավոր հայտնում են շրջանային ֆինքանչների:

3. Գյուղխորհուրդները կարկտահարության դեպքում պարտավոր են անմիջապես և վոչ ուշ յերկու որից հետո տուժած կողեկտիվ և անհատական տնտեսությունների ներկայացուցիչների, գյուղական ակտիվի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ նայել վնասված բուսական մշակույթները տեղում (դաշտում), կազմել տուժողների ցուցակը: Այդ ցուցակը կազմվում և Ֆինժողկոմատի (Պետապի) համապատասխան բլանկի վրա, ցույց տալով տուժող տնտեսությունների և տնտեսատերների ազգանունը, անունը, հայրանունը, ինչպիսի տնտեսություն ե (միջակ, չքավոր, կոլխոզիկ, կուլակ), վնասված բուսական մշակույթի տարածությունն առանձին-առանձին յուրաքանչյուր մշակույթի նկատմամբ, ցանքի փաստացի տարածությունը, կարկտահարությունից ստացած վնասի ճիշտ առկուսը, նույնպես առանձին-առանձին յուրաքանչյուր մշակույթ նկատմամբ: Տուժած տնտեսության հերթական համարը ցուցակում պետք ե ցույց տալ այն, ինչ վոր նշված և ապահովագրական ծանուցագրում (առև կցում ձեւ № 20):

4. Կարկտահարությունից տուժողների ցուցակը գյուղխորհուրդները յերեք-չորս որով կախում են աչքի ընկնող տեղում, վորպեսզի ապահովագրվածներն ստուգեն՝ արդյոք բաց չի թողնված իրենց ցանքերը, վորից հետո հրամիրում են ընդհանուր ժողով, վորտեղ կարկարույթ կարկտահարված տնտեսությունների ցուցակը, ուղղում են սիալները և ավելացնում են բաց թողնված տնտեսությունները, յեթե այդպիսները կլինեն:

Հիշված կազմված ցուցակներն ստորագրվում են վերոհիշյալ հանձնաժողովի կողմից և վոչ ուշ, քան յերկու որից ներկայացվում և շրջիկներաժնին:

5. Գյուղխորհուրդները բացատրում են տուժողներին, վոր Ֆինժողկոմատը կանոնների հիման վրա իրավունք ունի չվճարելու ապահովագրական վարձատությունն այն տնտեսություններին, վորոնք բուսական մշակույթների ցուցակագրության և վնասների լուծարքան ժամանակ սխալ տեղեկություններ կտան:

6. Գյուղխորհուրդները բացատրում են ապահովագրվողներին, վոր բոլոր վեճերը, թե՛ վնասված բուսական մշակույթների տարածության վերաբերյալ և թե՛ վնասի տոկոսի նկատմամբ պետք ե լուծվեն տեղում ակտը կազմելու ժամանակ՝ ապահովաչի և գյուղատնտեսի կողմից, հե-

տագայթամբ վոչ մի դեպքում չեն ընդունվում բողոքներ այդ հարցերի վերաբերյալ:

7. Գյուղխորհուրդները բացատրում են ապահովագրվողներին (տուժողներին), վոր մինչեւ վնասի վերջնական վարչությունը և վնասված ցանքսերում արածացնել անսառներ և առհասարակ կատարել այսպիսի գործողություններ, վորոնք կարող են վնասի չափն ավելացնել:

8. Գյուղխորհուրդները պետք ե բոլոր միջոցները ձեռք առնեն, վորպեսզի բուսական մշակույթների թե՛ փաստացի և թե՛ վնասված տարածությունները ցույց տրվեն ճիշտ, վորի համար գյուղխորհուրդի նախագահն անձամբ պատասխանատու յե: Գյուղխորհուրդների նախագահներն անձամբ պատասխանատու յեն նույնպես և նվասների ճիշտությամբ կամ վորոնքին համար:

ՇՐՋԻՆԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 21.

1. Շրջֆինբաժինները, ստանալով գյուղխորհուրդներից տեղեկանք կարկտահարության մասին, անմիջապես դորձուղում են ապահովիչն կամ գյուղատնտեսին կարկտահարված գյուղը, վորը տեղում պարզում և վնասված բուսական մշակույթների տարածությունը և մոտավորապես վնասի ընդհանուր չափը՝ Ֆինժողկոմատին հայտնելու համար և հրահանդում են գյուղխորհուրդներին՝ նրանց անելիքի մասին ներկա գեղագույն արդարականությունը: Բացի դրանից, ապահովուչը կամ գյուղատնտեսը տեղում պարզում են լուծարքան վերջին ժամկետը:

2. Գյուղխորհուրդներից ստանալով կարկտահարություններից վնասված տնտեսությունների (ապահովագրվողների) ցուցակը, Փինֆաժինն արդարականությունը համարակալում և հաջորդաբար ըստ կարգի:

3. Ֆինբաժինը յուրաքանչյուր տասն որը մեկ անգամ՝ մեկին, 11-ին և 21-ին՝ կարկտահարության և անբերրիության մասին ներկայացնում և Ֆինժողկոմատին տասորյա տեղեկացնում ե Ֆինժողկոմատին հասարակությամբ ձեւ № 27 բլանկի վրա:

4. Այն գեղեցերում, յերբ կարկտահարությունից կամ անբերրիությունից վնասված տարածությունը 300 հեկտարից գերազանցում է, շրջֆինբաժինը տեղեկացնում ե Ֆինժողկոմատին հասարակությամբ՝ մոտավորապես հետեւյալ բովանդակությամբ՝

«ՅԵՐԿԱՆ—ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻՆ»

Հունիսի յերեսունին Դյուլքըանդում կարկտահարվել և վեց հարյուր հեկտար հասարակ ցորեն, գարի»:

5. Գյուղխորհուրդներից ստացված կարկտահարված տնտեսու-

Քյունների ցուցակը (ձև № 20) շրջֆինբաժինն արդպիսին արտագրում է ձև № 21 բլանկի մեջ լրացնելով 1, 2, 3, 4, 5, 6 և 7 սյունյակները, այսինքն՝ համարներն ըստ կարգի, տնտեսության համարն ըստ ռեգիստրացիոն ցուցակի, ինչպիսի տնտեսություն ե, ապահովագրվողի ազգանունը, անունը, հայրանունը և կարկտահարված մշակույթներն ըստ տառանձին կուլտուրաների, ապահովագրված տարածության չափն հեկտարներով, ամբողջ ցանքի փաստացի տարածության չափը նույնայն հեկտարներով, ցուց տալով կարկտահարված տարածությունը և վնասի տոկոսները:

Դանորովյուն. — Այն դեպքում, յերբ միենույն տնտեսության բուսական մշակույթները կարկտահարվել են զանազան սառնաներում, այդ գեղագում կարկտահարության ակտում վնասված բուսական մշակույթները պետք է գրել մեկ համարի տակ, այլ վոչ թե տարբեր տեղերում, որինակ՝ կարագետյանը մեկ սառնայում ունեցել ե յերկու հեկտար ցորեն, իսկ մյուս սառնայում մեկ հեկտար գարի և յերկու տեղն ել կարկտահարվել ելին:

Ուրեմն ակտում պետք է գրել՝

Կարագետյան — ցորեն յերկու հեկտար 50 տոկոս.

Կարագետյան — դարի 1,0 հեկտար 30 տոկոս :

Վնասի չափը հաշվարկելիս անհրաժեշտ է գորս բերել միջին տոկոս, համաձայն տեխնիկական հրահանդիրի § 21-ի:

Ակտի յերեք սյունյակները (8—10) լրացվում են լուծարքողի (գյուղատնտեսի կամ ապահովի) կողմից տեղում վնասը վորոշելու ժամանակի:

6. Այդպիսի կարգով պատրաստված տվյալներով ապահովուչը գյուղատնտեսի հետ միասին ժամանում են կարկտահարված վայրը վնասները լուծարքելու ժամանակի: Լուծարքումը բոլոր դեպքերում կատարվում և անդամագույն ապահովությամբ:

Դանորովյուն. — Յեթե վնասված տարածությունը 50 հեկտարից ավելի չե, ապա՝ ապահովուչը վնասը կարող է լուծարքել առանց գյուղատնտեսի մասնակցության, բացի հատուկ տեխնիկական մշակույթներից, վորոնց լուծարքը կատարվում և անպայման գյուղատնտեսի հետ միասին:

7. Ապահովուչը և գյուղատնտեսը կարկտահարությունից վնասված մշակույթները լուծարքելու համար տվյալ գյուղում կարմակերպում են հատուկ հանձնաժողով՝ մասնակցությամբ՝ ապահովի գյուղատնտեսի, գյուղխորհրդի, տուժողների, լիազորի և գյուղական ակտիվի ներկայացուցիչի:

8. Այդ հանձնաժողովը պարզում է և արձանագրում է կարկտահարության ակտում՝

ա) ամբողջ ցանքսի փաստացի տարածությունը յուրաքանչյուր տնտեսության նկատմամբ (սյունյակ 7):

բ) կարկտահարված բուսական մշակույթի ճիշտ տարածությունը յուրաքանչյուր տնտեսության նկատմամբ (սյունյակ 8):

գ) Այլ պատճառներից առաջացած վնասի չափը տոկոսներով յուրաքանչյուր բուսական մշակույթի նկատմամբ (սյունյակ 9). ըստ աընտեսությունների:

դ) կարկտահարությունից առաջացած վնասի չափը տոկոսներով յուրաքանչյուր բուսական մշակույթի նկատմամբ ըստ տնտեսությունների (սյունյակ 10):

9. Վնասները վորոշելու ժամանակ հանձնաժողովը պետք է զննի յուրաքանչյուր հողամասը ըստ տնտեսությունների: Խսովիլ արդելվում և վնասների տոկոսները վորոշել ըստ սառնաների:

10. Հանձնաժողովը վնասիված բուսական մշակույթների ընդհանուր տոկոսներից պետք է գորս գա այլ պատճառներից վնասված տոկոսները և մնացածը պետք է գրանցի ակտի 10-րդ սյունյակում:

Որինակ՝ ցորենը վչացել ե յերաշտից 30 տոկոս և կարկտահարությունից 40 տոկոս ընդհամենը 70 տոկոս (տես ակտի 9-րդ և 10-րդ սյունյակները), ակտի 10-րդ սյունյակում պետք է նշել վոչ թե 70 տոկոս այլ 40 տոկոս:

11. Այն գեղագում յերբ հանձնաժողովը գտնում է, վոր այս կամ այն տնտեսության բուսական մշակույթը կարկտահարությունից չի վնասվել — ապա այլ տնտեսության բուսական մշակույթի դիմաց դրում և «չի վիճակած»:

12. Իբրև ընդհանուր կանոն կարկտահարության վերջնական լուծարքումը կատարվում է բերքի հավաքելուց յերկու շաբաթ առաջ և վոչ ուշ բերքի մասնակի կամ լրիվ հավաքելուց, այսինքն այն ժամանակ, յերբ բերքի արդյունքը վերջնականապես պարզվում է, բացառությամբ այն դեպքերից, յերբ բուսական մշակույթը 100 տոկոսով փչացել ե և անհրաժեշտ է կատարել կրկնացան (տես տեխնիկական հրահանգը):

Որինակ՝ յենթագրենք հունիս ամսում կարկտահարվել ե ցորենի ցանքը 40 տոկոսով: Այդ գեղագում կազմել ակտ և վնասը անձիշապես վճարել չի կարելի, այլ հարկավոր և ապահով մինչեւ բերքի արդյունքի վերջնական պարզումը և այն ժամանակ վորոշել ցորենի վնասի վերջնական տոկոսը կարկտահարությունից:

13. Վնասները վորոշող հանձնաժողովը պետք է պատասխանի կարկտահարության ակտի բոլոր հարցերին լրիվ, ճիշտ և վորոշակի: Կարկտահարության ակտի վերջում հանձնաժողովը նշում է, «ավագ ակտը վերջնականն ե և հետադարձում վոչ մի դիմում կամ բոլոր չի ընդունվում տուժողներից»:

14. Արդպիսի կարգով կաղմաց կարկտահարության ակտը ստորագրվում է լուծարային հանձնաժողովի կողմից և հաստատվում է դյուզիառությունից ինքը:

15. Կարկտահարության ակտը տեղում կտրմելուց հետո, այսինքն ձեւ 21-ի 2-րդ յերեսի 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, և 10 սյունյակները լրացնելուց հետո՝ ըրջինբաժինը (ապահովագրությունը) վորոշում են (հաշվարկում ե) ապահովագրական վարձադրության չափը (տես ակտի 11 և 12 սյունյակները):

Սահմություն.— Ապահովագրական վարձադրությունը պետք է հաշվարկել 1932 թ. համար սահմանված նորմաներով (տես ՀՍԽՀ ժողկոմիությունի 1931 թ. հունիսի 30-ի վորոշումը):

16. Յեթե լուծարքը կատարելու ժամանակ պարզվում է, վոր մի տևաեսություն ցանել ե մի վորեւ հողամաս կիսովի այդ դեպքում ակտի 2-րդ սյունյակում ցույց է տրվում հիմնական հաշվառման ցուցակում նշված տնտեսության համարը և ակտի վեցերորդ սյունյակում ցուցակագրված տարածության չափը, իսկ աղատ սյունյակում դրվում է «իմաստ»: Արդպիսի անտեսությունների նկատմամբ ակտի վերջի յերեսում կաղմվում է հասուլ արձանադրություն, վորագով դրամը բաժանելու ժամանակ խուսափել թյուրիմացություններից:

17. Ապահովագրական վարձադրության հաշվարկը կատարելիս, ըրջինբաժինը պետք է ձեռք առնի բոլոր միջոցները, վորագովի հաշվարկը, (վնասի չափը) կատարվի ճիշտ—առանց սխալների վարի համար պատասխանատու և ըրջինբաժնի վարիչը անձամբ:

Սխալ վճարված զումարները գրվում են ըրջինբաժնի վարիչին հաշվին և պահպատման նրա աշխատավարձից:

ԲՈՒԽԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՎՆԱՍՆԵՐԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ
ԱՆԲԵՐԲԻՈՒԹՅՈՒՆԻՑ

§ 22.

1. Համաձայն ՀՍԽՀ ժողկոմիությունի 1931 թ. հունիսի 30-ի վորոշման, Հայաստանում 1932 թ. ապահովագրվում են պարտադիր կոպարային կարգով անբերբիությունից, բամբակի, սոյի, կենափի, զենագերչակի, քունչութի, արախիսի և զեղին ծխախոտի ցանքսերը: Յեթե վերոհիշյալ բուսական մշակույթների բերքը պակաս յեղակ ժողկությունի կողմից սահմանված նորմայից (քանակից) այդ դեպքում ֆինանսիումատը վճարում է ցանքսատերերին թերահավաքի արժեքը սահմանված կայուն գներով, բայց վոչ ավել տվյալ մշակույթի իրական արժեքից:

2. Վերոհիշյալ կուլտուրաների վնասը վորոշելու համար կատարվում են հետևյալ աշխատանքները՝

ա) գյուղերում տարգում և լայն բացարարական աշխատանք, վորագովի ապահովագրվողները ապահովագրական դեպքի մասին հայտնեն գյուղիուրհուդին կամ ըրջինբաժնին յերկու որվա ընթացքում, համենայն դեպք վոչ ուշ, քան յոթ որից մինչև բերքի հավաքումը:

բ) Ծրջինբաժնինը վնասի մասին տեղեկություն ստանալուն պիսանմիջապես ըրջուղատնտեսի և շահագողոված հիմնարկությունների ներկայացուցիչների հետ միասին տեղում (վնասաված դաշտում) կոտարում և զնուամ և մանրամասնորեն արձանադրում է բերքի անբերիթյան պատճառները (կարկտահարությունից, յերաշտից, ցրտահարությունից, ագրոմինիմումը չկատարվելուց և այլն), պատասխաններով այդ բուսական մշակույթի համար սահմանված հատուկ բլանկի բոլոր հարցերին (տես կցումը):

գ) Անբերբիությունից վնասված բուսական մշակույթների հետ կապված բոլոր խնդիրները և լուծարայինները պետք է անպայման վաղորոք համաձայնեցնել ըրջանային կազմակերպությունների հետ:

դ) Նախնական զնուաթյան ժամանակ պարզվում է արձանագրվում և վնասված բուսական մշակույթների ճշշտ տարածությունը ըստ բուսական մշակույթների առանձին և ըստ տնտեսությունների և բերքի անբերբիության չափը:

3. Անբերբիությունից ապահովագրված բուսական մշակույթների վերջնական վնասի չափը վորոշելու համար կաղմվում է հասուլ ակտ ձեւ № 21 ա. բլանկի վրա, նույն կարգով ինչ կարգով կաղմվում է ակտերը:

Այդ ակտին կցվում են անպայման՝ ա) նախնական զնուաթյուն արձանագրությունը վնասված տնտեսությունների ցուցակը (ձեւ № 20) և վերջնական պաշտոնական տեղեկանք մթերող որդաններից նրանց հանձնված բերքի քանակի մասին ըստ տնտեսությունների: Առանց այդ վաստաթղթերի անբերբիության ակտը (ձեւ № 21 ա.) չի հաշվում որինական և վնասները արգելվում ե բավարարել) մանրամասնորեն տես տեխնիկական հրահանգը):

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 23.

Կարկտահարության և անակտերի վնասը բոլոր ակտերը նախքան վնասի վճարումը պետք է անպայման հաստատված մինի ըրջորժիկոմինախաղահարի և ըրջինբաժնի վարիչի կողմից: Առանց ակտի հաստա-

ման վոչ մի դեպքում չի թույլատրվում վնասը բավարարել, անկախ գումարի չափից :

§ 24.

Ապահովագրական վարձատրության վճարումները, կատարվում են անպայման այն գյուղում, վորտեղ տեղի ե ունեցել կարկտահարության կամ անբերրիության վնասը, շրջինբաժնի կամ խնայզրամարկղի միջոցով :

§ 25.

Յեթև ապահովագրական վարձատրությունը բաժանվում է շրջ-քինբաժնի միջոցով, այդ դեպքում վերջինս գյուղխորհուրդի հետ միասին տվյալ գյուղում կազմում են հատուկ հանձնաժողով, վորի ներկայությամբ կատարվում են ապահովագրության վարձատրության հառուցումները։ Այդ հանձնաժողովը վարձատրությունների հատուցումից հետո ակտի վերջում կազմում ե արձանագրություն, վորտեղ նշում ե տրված վարձատրության ընդհանուր գումարը տառերով և վավերացնում ե վնաս ստացողների ստորագրությունը։ Հանձնաժողովի անդամների ստրագրությունը հաստատվում է գյուղխորհուրդի նախորդականի կողմից :

§ 26.

Ապահովագրական վարձատրությունը բաժանելու ժամանակ տընտեսատիրոջ անդրադիտության պատճառով, նրա տեղը ստորագրում ե ուրիշ գյուղացի, բայց վոչ հանձնաժողովի անդամի կողմից։ Ստորագրողը իր անուն և աղդանունը պետք է պարզ գրի։

§ 27.

Կարկտահարության և անբերրիության վիճաները լուծարվում են գործկոմի և շրջինբաժնի ապարատի (ապտեսչի և գյուղատնտեսի) միջոցով և վոչ մի առանձին վարձատրություն լուծարվողներին չի տրվում, վորովհետև այդ աշխատանքները մտնում են նրանց անմիջական պարտականությունների մեջ և նրանք իրավունք չունեն հրաժարվելու այդ աշխատանքներից։

§ 28.

Լուծարքային աշխատանքները թեթևացնելու համար սույն հրահանգին կցվում են կարկտահարության և անբերրիության նկատմամբ լրացված բոլոր ձևերը և պատրաստի աղյուսակներ ի դեկավարություն։

Ապահովագր. սեկտորի գեկավար՝ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Ավ. կոնսուլտանտ՝ ՍԱՐԳՍՅԱՆ

«10» ապրիլ 1932 թ.

Յերեան։

ՀՀ Ազգային գրադարան



NL0211424

44.247